Վերջապէս ինչպէս Մատրասան, նոյնպէս և ամեն գիւղ ունի իւր սրբատեղը, որով սրբասէր ժողովուրդը մխիթարւում է հոգեւորապէս իւր առանձնական աղօթքները անելով, որը եկեղեցում չէ կարողանում անել՝ իւրեանց ասելովն։

Մադրասայի հանդէպն են՝ հարաւային կողմին՝ Քարքանջ գիւղը, արեւելեան կողմին՝ Քալախանի գիւղը, և հիւսիսից՝ Միրիշէն գիւղը, որք և սահմանակիցք են Մադրասային չորս կողմերից։

Այս յիշեալ գիւղօրայքը մի նորութիւն կամ տարբերութիւն չունելով 20, 30 տարի յառաջ եղած գրութիւնից՝ ինչպէս 1865 թուին գրել է Դանիէլ Արքեպիսկոպոսը՝ արժանի յիշատակաց գրելիք չունին, բացի բնակչաց աւելանալուց, ինչպէս համեմատական ցուցակից երեւում է, որ գրքիս մէջն է յերես 138։ Միայն այսքան՝ որ Քարքանջն ունի արքունի դպրոց, իսկ Բալախանցիք՝ աշխատութեամբ Զիրակունի Յարութիւն քահանայի պատրաստւում էին շինել և բանալ դպրոց եկեղեցական։

Կայ Մադրասայ անունով և քաղաք Հնդկաստանի Կալկաթայ քաղաքի մօտ, որոյ բնակիչ հայք հաւանական է, որ այս կողմերիցը գնացած կամ տարւած լինին։ Այն Մադրասայի գինին ևս անուանի է, որից 1855 թուին Սպահանի առաջնորդ Թադէոս եպիսկոպոս Բէկնազարեանցը ուղարկել էր ի վայելս Ներսէս Կաթուղիկոսի 500 շիշ։

Այն Մադրասան նշանաւոր է և հայոց տպարանովն։

Պարոն Պօղոս Պետրոս Լազարովիչ Կ Պոլսեցի ի Սատրազրութեան Կալկաթա քաղաքի, տպեալ ի Վէնէտիկ 1832, յերես 43 գրէ «ի Մադրաս են տունք 25»։ Եւ յերես 31 ասէ «ի Մադրասէ բերեն ազգի ազգի բամբակեայս ընտիրս ճամկաւորս (ըռանգ ըռանգ), զոր (հնդիկք) կոչեն կընկամ, և թաշկինակս գեղեցիկս» են։

Քարքանջ հայաբնակ գիւղ Մադրասի հանդէպն, որոյ համար արդէն վերեւումը՝ յերես 72 և 185 գրել եմ սուրբ Սահակ ուխտատեղւոյ տեղիս։ Ունի արքունի դպրոց 45 աշակերտօք, կից մեր եկեղեցւոյն։